





ԼԵՆԻՆԸ
ՀԱՅԿԱԿԱՆ
ՖՈԼԿՈՐՈՒՄ

ՊԵՏՂՐԱՏ

891.99-13 29294.

1-35 Երիկ հայրական
ֆոլիորմ. 1n. 50,





ՀԱՍՀ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

891.99-13

L-35

ՏԱՐԱԿԱՆ Տ 1961 թ.

ԼԵՆԻՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՖՈԼԿԼՈՐԻ

(Պ.ՊԴ.ՊՎ.Ա.ԺՈՒ)

A 6219



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ

1937



3965


Ա.Ռ.Ա.ԶԱ.Բ.Ա.ՆԻ ՓՈԽԱՐԵՒՆ

Ներկա ժողովածուի մեջ ամփոփված են Հայկական ԽՍ Հանրապետության մի շաբթ շրջաններից (Վաղարշապատ, Աշտարակ, Կոտայք, Լենինական և այլն), վերջին տարիներս, Պատմության և Գրականության ինստիտուտի փոլիտրիստ-բանահավաք Ք. Թարլերդյանի կողմից հավաքված փոլիտրային նյութերը (չափածո և արձակ) Լենինի մասին։ Վերջիններիս մեջ բուն ժողովրդական «անանուն» ստեղծագործությունների կողքին, զգալի տեղ են գրավում նաև աշխատավորական խավերի ծոցից դուրս յեկած գյուղական ինքնուս բանաստեղծների և աշուղների յերկերը։ Զեկական գորոշ տարբերություններ (լիզվի, վաճի, վոտանավորի տաղաչափական կառուցվածքի և այլն) ունենալով հանգերձ, հիշյալ յերկու կարգի ստեղծագործությունները (բուն «ժողովրդական» և «անհատական») ունեն մի ընդհանուր, միասնական բովանդակություն։ Նրանց բոլորի նյութն եւ՝ աշխատավոր մարդկության մեծագույն հանճարներից մեկի՝ Լենինի կյանքն ու գործն եւ։

Այս չափով, զոր չափով՝ 1. մեր յյուղական ինքնուս բանաստեղծների և աշուղների վերոհիշյալ ստեղծագործությունները՝ հորինվելուց անմիջապես հետո, չեն տպագրվել իբրև վերջիններիս անհատական ստեղծագործություններ։ 2. հիշյալ ստեղծագործություններից շատերը ժամանակի ընթացքում արտադրվելով, անգիր արվելով կամ ծանոթ մի յեղանակի հարմարեցված տարածվել են գյուղական մասսայի մեջ (այդ մասին մենք ունենք բանահավաքի մի շաբթ զրավոր վկայությունները), յենթարկվել մշակման, խմբագրման՝ կրելով իրենց վրա կոլեկտիվ ստեղծագործության նկատելի կնիքը։ 3. այդ ստեղծագործու-

թյունների մեջ արտացոլված են ժողովրդական լայն մասսաների—առաջին հերթին գյուղական չքավորության և կոլտնտեսականների հույզերն ու տրամադրությունները, մենք հարմար համարեցինք վերոհիշյալ յերկու կարգի սուելծաղործությունները միացնել մի ժողովածուի մեջ՝ «Ենինը հայկական Ֆոլկլորում» ընդհանուր խորապես տակ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ



ԼԵՆԻՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՖՈԼԿՈՐՈՒՄ

Ժամանակակից հարկական ֆոլկորը, Խորհրդային Մեծ Սիռության բազմաթիվ ու բազմազգի ժողովուրդների՝ հետհոկան բերյան շրջանի ֆոլկլորի նման՝ հարուստ և զոկտեմբերյան Սոցիալիստական Հեղափոխության հանձարեղ առաջնորդ՝ Լենինին և Ստալինին նվիրված բազմաթիվ ու բազմաժամանք ստեղծադործություններով։ Առանձնապես առատ և այս տեսակետից խորհրդահայ ֆոլկլորի քնարերդական բաժինը (ժողովրդական յերգեր), վերջինիս մեջ բազմակողմանի կերպով, ցայտուն դժերով և ուսալիստական ու վառ պատկերներով արտացոլված և աշխատավոր մարդկաւթյան մեծագույն առաջնորդներից մեկի կյանքն ու գործը՝ ժողովրդական ընդերքից դուրս յեկած բազմաթիվ անանուն յերդիները, կիսադրագետ աշուղներն ու գյուղական ինքնոււս բանաստեղծներն իրենց «ջանիմաններում» ու «լելիներում», աշուղական գլաստաններում և պարզ ու անսլանույթ վոտանավորներում, բառ չեն խնայում փառաբանելու ու գովերգելու համար իրենց սիրեցյալ առաջնորդին։ Լենինի անունը նրանց համար «քանցր» է, խոսք ու զրույցը՝ «քաղցր», ինքը՝ «հույս» ու ճար» և լուսավոր աստղ, «մեծ մարդարեց», «նաշարի պաշտպան», «ջափաղ» լույս, «պայծառ ճրագ» և այլն։ Նա ոժտված և արտաքին ու ներքին բազմաթիվ առավելություններով։ Լենինն ունի՝ «վարդ ջամալ», «վոսկի բերան», նման և բաղեցի («խարախուշ»), յերաշախ ժամանակ յերկրագործ մարդու համար այնքան անձկալի, անձրեսերը, բարի ամպի և այլն։ Ավելի ցայտուն են Լենինի ներքին բարեմասնությունների՝ նըա խելքի, շնորհքի, ուժի և այլն նկա-

բազրությունները։ Առաջնորդին նվիրված իր մի ընդարձակ յերգ—
դաստանի մեջ, որինակ, լենիսականցի 37 տարեկան կույր աշուղ
Նազուքը գովում և Լենինի՝ «մեծ» հոդին, «ծով» խելքն ու
շնորհը, «բարի» խիդճը, նրա «եհթիբարն ու ինթիզարը», «զարքն
ու զոռը»։ Խակ Արթիկի բանվոր, կիսադրագետ, ինքնուս բանաս-
տեղծ 39 տարեկան Զումշուղ Գելորդյանն իր «Լենինի յերգը»
վերնադրով վոտանավորում, բարձր և կնահատում զեկավարի
«անկեղծությունն» ու «ընտիր և աղնիվ հոգին», և այսպես շա-
բունակ։

Աշխատավոր հայ գյուղացին, վոր դարեր շարունակ հեծել և
սեփական ու ոտարազգի բազմաթիվ ու բազմատեսակ հարստա-
հարիչների կը ըստիկի տակ, և «ծով աշխարհի» մեջ մնացել «ծարավ»
վիճակում, մեծարում և Լենինին վորակես իրեն ազատարարի ու
փրկչի, հիացմունքով բացականչելով։

«Աշխարհը մե ծով եր,
Մենք մեջը ծարավ.
Լենինի զործերով
Տեսան ինչ դառավ։»

Բովանդակալից պատկերներով ու պարզ բառերով նա տարիս
և շահագործող դասակարգերի բնաջնջման և աշխատավորների
ազատագրման համար Լենինի վարած պայքարի մի շարք ցայ-
տուն դրվագները։

«Լենի քեց յօխվա, զզիր,
Լենինո, Լենինո.
Քյասիբ ապրի, մեզի իզին,
Լենինո, ջանինո։»

Կամ՝

«Պա, պա, պա, Լենին բաբա,
Նիկոլի զլոխն աղիր,
Աղա—բեգերը բաղիր,
Լավիր վաս ջոկիր, մաղիր։»

Նույնալիսի պատկերներով ու նմանողինակ բառերով, աշխատավոր հայ գյուղացին մի առ մի նկարագրում և սոցիալիստական շինարարության՝ հին, «խորաբա» աշխարհը վերաշինելու և աշխատավորների համար բարեկեցիկ կյանք ստեղծելու ուղղությամբ Լենինի կատարած մեծադույն գործերը.

«Եին աշխար խարաբա,
Շենցուցիր, շինիր աբադ,
Զուզողի տունը բարբադ...»

Կամ՝

«Լենի հաշխար շինեց դրախտ,
Լենինո, Լենինո.
Բացեց իյասիր—իյուսուբաց բախտ,
Լենինո, ջանինո։»

Նա պատմում է այն մասին, թե ինչպես այս վերակառուցված նոր աշխարհում հին իշխողների «քյոլավա—դպիրի», «աղաբեկերի» փոխարեն, Լենինի շնորհիվ, այժմ, տեր ու անդրեն հնդառել յերբեմնի զրկվածներն ու արհամարհվածները, «նոքյարներն» ու «խզմաթքյարները».

«Նոյեար, խզմար տեր ին դառե,
Լենինո, Լենինո.
Մեկ մեկու ընզեր ին դառե,
Լենինո, ջանինո։»

Աշխարհը վերակառուցելուց, աշխատավորների նյութական դրությունն ապահովելուց և իշխանության զեկը նրանց ձեռքը տալուց հետո, Լենինը ձեռնարկում է մասսաների կուլտուր—կրթական մակարդակի բարձրացման, լուսավորության տարածման մեծ գործին։ Նա ամենուր լիկայաններ ու դպրոցներ և հիմնում, վորտեղ մատաղ սերնդի հետ սովորում և ուսում են առնում նաև հասակավորները.

«Սադ ճձուկներ ըշկոլ մտա՛,
Լենինո, Լենինո.
Կիխկայաններ հուսում կիւտան,
Լենինո, ջանինո։»

Տիբող դասակարգերի և վերջիններիս հլու կամակատար քուրժուա-ազդայնական կուսակցությունների կողմից տարբեր ժողովուրդների մեջ սերմանվող ազգային ատելության ու թշշ-նամանքին վերջ և տալիս Լենինը, ծավալուն պայքար և տանում դրացի և յեղբայրական ժողովուրդների մեջ ազգային համերաշ-խություն, համագործակցություն և ամենամոտ մտերմական հարաբերություններ ստեղծելու համար ժողովրդական յերգիչը, վորն իր կաշու վրա զգացել և հարեան ժողովուրդների մեջ վե-րուստ սերմանվող ազգային ատելության վողջ դառը հետեանք-ները, շատ բարձր և գնահատում Լենինի մեծագույն դերը նաև այս հարցում:

«Սարք ու կարք դրեց մեջ աշխրին,
Խային, բուրքին ախալեւացուց.
Աման Լենին, մաղաք Լենին»:

Մեր ձեռքի տակ յեղած լենինյան յերգերի մեջ ուշադրավ են նաև աշխատավոր կանանց, կոլտանտեսուհիների ստեղծագործությունները. Ամուսնու և աշխատանքի ընկերոջ՝ տղամարդու նման, աշխատավոր հայ գեղջկուհին ել իր յերգերում դրվատում ու գովաբանում և Լենինին, նրա կյանքն ու մեծ գործը: Նա առանձնապես զգացված ե ու բերախտավարտ Լենինից, վորովհե-տև նա ազատել և իրեն այն իրավագուրի ու ստոր վիճակից, վո-րում գտնվել ե ինքը յերկար դարերի ընթացքում.

«Լենու մասսաք մե ազատեց,
Կնիկ, մարգերաց խավսարեց.
Ցես մեռնեմ Լենու զակոնին,
Աման Լենին, մաղաք Լենին»:

Այսպէս, աշխատավորական խավերի ծոցից գուրս յեկած նոր ժողովրդական յերգիչները, աշուղներն ու ինքնուս բանաս-տեղծներն իրենց ստեղծագործություններում՝ մեկլիկ-մեկլիկ արձանագրում են այն բոլոր նվաճումները, վոր ձեռք են բերել իրենք և իրենց նմանները Լենինի շնորհիվ:

Ներկա ժողովածույթում զետեղված խորհրդահայ Փոլկորի լե-նինյան յերգերի շարքի մեջ, թէ իրեն դասակարգային հաղեց-

զածությամբ և թե դեղարվեստական արժանիքներով (հարուստ գեղարվեստական նկարագրություններ, պատկերավոր համեմատություններ, վառ մակղիճներ ու գունեղ ածականներ, տաղաչափական ճույլ կառուցվածք) ուշագրավ տեղ և դրավում «Լանին փաշա» վերնագրով՝ընդարձակ վիպական յերգ-ալուսմը Վերջնիս մեջ եղիկական շնչով պատմված եւ այն մեծ կոփվը, վոր մղել ե Լենինը «Քյասիբների» զորքի գլուխն անցած՝ «Հյուքմաթիւ զորքի դեմ աշխարհը ժխավարական» դարձնելու նալատակով:

Լենինի կատարած մեծ գործերի և նրա միջոցով ձեռք բերված հոյակապ նվաճումների արձանագրման հետ, մեր ժողովը դական յերգիչներն ու բանաստեղծներն իրենց ջերմ սերն ու անսահման նվիրվածությունն են արտահայտել առաջնորդին, դովելով նրա ստեղծած՝ «կոմունը», «խորհուրդը», «զակոնը», «ղարաբ-դիվանը», նրա «ինդիքքներին», մատաղ յեղել նրա «բախտին», «ջահվար ջանին», «պատկերին» և այլն Խորը անկեղծությամբ ու անմիջականությամբ են շնչում Լենինին նվիրված վերոհիշյալ ստեղծագործությունների մեջ ժողովրդական յերգիչների ու բանաստեղծների յերախտիքի տողերը.

«Մենք ունինք մե լավ Լենին,

Մենին Լենինու դիմին.

Դին ը դիրակ անխախս ի,

Մենին Լենինու բախտին»:

Այս բոլորից հետո միանգամայն հասկանալի յե այն անուան-ման վիշտն ու խորը ցավը, վոր պատճառում և ժողովրդական յերգիչներին, ինքնուս բանաստեղծներին ու աղուղներին Լենինի մահը, աղդակ դառնալով ափոսոսանքի ու կսկիծի բազմաթիվ անկեղծ ու ինքնաբուզիս բանաստեղծությունների հորինման.

«Աղբատների սիրը արունով լցվագ,

Ես դարա-խաբարը յերբ վոր լսեցին»:

Կամ.

«Յաման, ապվաղ ջան, ինչ զուլում արիր,
Խեղինի, նաշարի սիրը վառեցիր».

Շենին, Ֆաղիր գեղացու նոզին փրկեցիր,
Հազար ափսոս մեռար, դու մեր լավ Լենին:

Նման սրտառուչ տողերով անմահացներով Լենինի հիշատակը
ժողովրդական յերդիչներն ու բանաստեղծները, նրա մահվանից
հետո, չեն դադարում ստեղծագործելուց, այլ նոր թափով և նո-
րանոր յերգերով ու ձոներդներով սկսում են փառաբանել Լե-
նինի «զործը տանող», նրա տեղը «բերդի պես» կանգնած, «լավ
աշակերտ», ժողովրդի հայր և առաջնորդ Մհծ Ստալինին, վորին
նվիրված ժողովրդական ստեղծագործությունները շուտապ կը-
հրատարակվի առանձին գրքով:

~~ՀՀ~~ 3965 297294

A I
6219

ԼԵՆԻՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ
ՖՈԼԿԼՈՐՈՒՄ



ԼԵՆԸ ԸՆՈՒԻ ԽԱՂ,

ԼԵՆԻ ԵԿԱՎ ԻՆՉՐԻՄ պազե,
Վայ լե, լե, լե, լե.
Մե ազատեց շատ սթամե,
Վայ լո, լո, լո, լո:

ԼԵՆԻ վոր կա՞ մեկ թավատ եր,
Վայ լե, լե, լե, լե.
ԼԵՆՈւ կնոծեր աղալաթ եր,
Վայ լո, լո, լո, լո:

ԼԵՆՈւ աբած շատ իրավ եր,
Վայ լե, լե, լե, լե.
ԼԵՆՈՒ կնոծեր հախշաբք չավ եր,
Վայ լո, լո, լո, լո:

ԼԵՆՈՒ զորք եր կարմիր պահակ
Վայ լե, լե, լե, լե.
Քնմագ ին ամմեն ժամանակ
Վայ լո, լո, լո, լո:

Լենու շնուխաք պիրեց մեղի,
լի, լի, լի, լի.
Լենու պիրած մե կոլխող ի,
վայ լո, լո, լո, լո:

Արժի հախըլի—դռնյի մալին
վայ լի, լի, լի, լի.
Լենու պիրած՝ Շիրկանա ի,
վայ լո, լո, լո, լո:

Մեռնիմ ինու վարթ ջամալին,
վայ լի, լի, լի, լի.
Լենու հաշեռթ ի հստալին,
վայ լո, լո, լո, լո:

Ասել և Ականցի պառազ Նուբար Խնուրանը, ծնված 1872 թ.

ՍԱՎԵՏԾԻ ՀԵԼԵ-ԼԵ»-Ն

Ղուղիղաղը¹⁾ եկավ ձունը,
Կեցցե լենինի անունը.
Յար, յար, ելու յար,
Թելու յար, յար անուշ:

Մարի վրա շինենք շենքը,
Կեցցե լենինի որենքը.
Յար, յար, ելու յար,
Թելու յար, յար անուշ:

Ավել արի, ելավ թողը,
Կեցցե լենինի կռիսողը.
Յար, յար, ելու յար,
Թելու յար, յար անուշ:

Փախվել ա աշխարք ալամը,
Կեցցե լենինի դալամը.
Յար, յար, ելու յար,
Թելու յար, յար անուշ:

1) Լեռան անուն եւ:

Կարմիր տրոշակի գունը,
Կեցցէ լենինի կռմունը.
Յար, յար, ելլու յար,
Թելլու յար, յար անուշ:

Զուր տարա, լվացի պուրթը,
Կեցցէ լենինի խորհուրդը.
Յար, յար, ելլու յար,
Թելլու յար, յար անուշ:

Զալից կըտրի, պերի փետը,
Կեցցէ լենինի սավետը.
Յար, յար, ելլու յար,
Թելլու յար, յար անուշ:

Երեվանու պերին աղը,
Ընեմ լենինի մատաղը.
Յար, յար, ելլու յար,
Թելլու յար, յար անուշ:

Ասել ե Համզաչիմանցի Յեղիսաբեթ Գեղորդյանը, լսել ե ու-
րիշներից:

ԼԵՆՈՒ ԽԱՂ.

Լենու մասսար մեզ աղատեց,
Կնիկ, մարթերաց խավարեց.
Յես մեռնեմ Լենու զակոնին,
Աման Լենին, մադաթ Լենին:

Սարք ու կարք տրեց մեջ աշխրին,
Չոբնին տվից ուսում.
Խային, թուրքին ախաղերացուց,
Աման Լենին, մադաթ Լենին:

Քամին կու գեր, ի՞նչ անուշ եր,
Լենին եկով խարախուշ եր.
Շուն տաշնակաց պանը պոշ եր,
Աման Լենին, մադաթ Լենին:

Զուրը կու գեր պարցը սարեն,
Լենին խաբար եր մեր հալեն.
Ենիկ մեզի հույս ու ճար ի,
Աման Լենին, մադաթ Լենին:

Արել ծաթեց ամբի ծերեն,
Լենին մեղի եկալ տերեն.
Ամեն պարի մե կը պիրի,
Աման լենին, մադաթ լենին:

Լենի վոր կա, շափաղ լոս եր,
Քասըբաց խեյրին կը խոսեր.
Աշխարք խավասարական կուզեր,
Աման լենին, մադաթ լենին:

Սարից կու գեր բալլա-պորան,
Մեր լենին եր վոսկի պերան.
Դուշմընի տուն տառնա վերան,
Աման լենին, մադաթ լենին:

Մեր լենու անուն պարցր ի,
Խոսկ ու զրուցը քաղցը ի.
Թող դուշման նստի, լաց ըլնի,
Աման լենին, մադաթ լենին:

Լենուն մատաղ ըլնի Սումբոն,
Ճժուկներս կուշտ, կը խնդան,
Ենու ջահվար ջանին զուրբան,
Աման լենին, մադաթ լենին:

Ասել և Արթիկում վերաբնակված բնիկ Ականցի Սումբոն
(Սբատ), ծնված 1896 թ. լսել և ո-րիշներից:

Մ Ը Ր Խ Ա Զ Ո Յ Ի Խ Ա Գ .

- Տղա Խաչո, բաթրաք Խաչո,
Քո խին փոստե փափաղի տեղ,
Կլիսիտ տրած ետ շափախկեն,
Վժվ ի տվե, վժվ ի տվե:
- Կլիսիտ տրած ետ շափախկեն,
Լենին ի տվե, լենին ի տվե:
- Տղա Խաչո, նոքա՛ր Խաչո,
Քո ջընդըռ արխալղի տեղ,
Վրիտ թաղա ետա ֆռինջ,
Վժվ ի տվե, վժվ ի տվե:
- Վրիտ խաղած թաղա ֆռինջ,
Լենին ի տվե, վժվ ի տվե:
- Տղա Խաչո, Փաղիր Խաչո,
Քո քըրքըրկած աբայի տեղ,
Վրիտ մահուղ ետա փալթո,
Վժվ ի տվե, վժվ ի տվե:

- Տամ, չես կիտի՞ն վ՞ով ի տվե,
Լենին ի տվե, վ՞ով ի տվե:
- Տղա Խաչո, յեթը՛մ Խաչո,
Քո կազիլե մեշկապի տեղ,
Սեռուռի, խոռոտ ետա կոտին,
Վ՞ով ի տվե, վ՞ով ի տվե:
- Կապած սեռուռի կարմիր կոտիս,
Լենին ի տվե, Լենին ի տվե:
- Տղա Խաչո, քամ'ըփ Խաչո,
Քո քամուր շապիկ-թըմբընի տեղ,
Ետ փաթըսդա չամաշուրներ
Վ՞ով ի տվե, վ՞ով ի տվե:
- Իմ փաթըսդա չամաշուրներ
Լենին ի տվե, վ՞ով ի տվե:
- Տղա Խաչո, չբվլախ Խաչո,
Քո փաթավա տրեխներաց տեղ,
Ետա վզնով սեվ սապոքտեր
Վ՞ով ի տվե, վ՞ով ի տվե:
- Ետա վզնով սեվ սապոքտեր
Լենին ի տվե, վ՞ով ի տվե:
- Տղա Խաչո, յեսը՛ր Խաչո,
Քո լըկըված չափ լեզվի տեղ
Ետա թրաշ, ճարտար խոսքեր,
Վ՞ով ի տվե, վ՞ով ի տվե:

— Ետա թրաշ, ճարտար խոսքեր,
Լենին ի տվե, վովլ ի տվե:

— Տղա Խաչո, խնրած Խաչո,
Քո անտաշ, զըռ շարժումի տեղ,
Ետա ոսլմ, կիտնակըթոն
Վովլ ի տվե, վովլ ի տվե:

— Ետա ոսլմ, կիտնակըթոն
Լենին ի տվե, վովլ ի տվե:

Ասել է Ականցի Զանո Գրիգորյանը, ծնված 1906 թ.: Յերգն
ունի հատուկ յեղանակ. շատ տարածված է Գառնիի յենթաշըջանի
դյուղերում:

* * *

Պատ, պատ, պատ, Լենին բարա,
Մենշևկիկ փախավ, գնաց,
Տաշնակը յետ չմնաց.
Դու հասցուր մեզ շոր ու հաց:

Պատ, պատ, պատ, Լենին բարա,
Հարստներ մտան ծակը,
Տերտերներն ել քամակը,
Եղ դու յես մեր քնմադը:

Պատ, պատ, պատ, Լենին բարա,
Նիկոլի կլոխն աղիր,
Աղա-բեգերը թաղիր,
Լավ ը վատ ջոկիր, մաղիր:

Պատ, պատ, պատ, Լենին բարա,
Խին աշխարհը խարարա
Շենցուցիր, շինիր աբաղ,
Չուզողի տունը բարբադ:

Ասել և Գյուլեցի (Կոտայք) սեղագործ բանվոր Հայրո Պետրոսյանը, ծնված 1896 թ., լսել և ուղիղաբերից:

ԼԵՆԻՆԻ ՅԵՐԳԻ

Թել եմ մանում, կան ունի,
Մեռնեմ լենու կանոնին.
Կանոնիտ մատաղ, լենին ջան, ջան,
Անունիտ մատաղ, լենին ջան, ջան:

Պարակ անձրեվ կը կաթի,
Մեռնեմ լենու սըֆաթին.
Սփաթիտ մեռնեմ, լենին ջան, ջան,
Անունիտ մեռնեմ, լենին ջան, ջան:

Աշկըս ընկավ սհաթին,
Մեռնեմ լենու բուսաթին.
Բուսաթիտ մեռնեմ, լենին ջան, ջան,
Անունիտ մեռնեմ, լենին ջան, ջան:

Ծեն տամ աշխար ալամին,
Մեռնեմ լենու դալամին.
Դալամիտ մեռնեմ, լենին ջան, ջան,
Անունիտ մեռնեմ, լենին ջան, ջան:

Թելս կծկեր եմ կաժին,
Մեռնեմ բոյին ու բաժին.
Յու բաժին մեռնեմ, Լենին ջան, ջան,
Անունիտ մեռնեմ, Լենին ջան, ջան:

Արի եթանք մեր եքին,
Մեռնեմ Լեռու դիլաքին.
Դիլաքիտ մեռնեմ, Լենին ջան, ջան,
Անունիտ մեռնեմ, Լենին ջան, ջան:

Ասել և Աղավազցի սեվագործ բանվոր Խերան Մկրտչյանը,
ձնված 1904 թ., լսի և ուրիշներից,

* * *

ՊՃԻՃ կեղին արեց զակուն,
Լենինո, Լենինո.

Մեռնեմ մեր Լենու խոքուն,
Լենինո, ջանինո:

Նոքար, խղմաթ տեր ին տառե,
Լենինո, Լենինո.

Մեկ-մեկու ընդեր ին տառե,
Լենինո, ջանինո:

Սաղ ճժուկներ ըշկոլ մտան,
Լենինո, Լենինո.

Լիխայաններ հուսում կ'իտան,
Լենինո, ջանինո:

Լենի հաշխար շինեց արախտ,
Լենինո, Լենինո.

Բերեց քանիբ-քանուբաց բախտ,
Լենինո, ջանինո:

ԱԵՆԻ ՔՉԵց ՔՌԽԱՎԱ, ՊՊԻՐ,
ԼԵՆԻՆՈ, ԼԵՆԻՆՈ.
ՔԱՆԻԲ ապրի, քեզի իդին,
ԼԵՆԻՆՈ, ՋԱՎԱՆԻՆՈ:

ԼԵՆԻ հաշխար շինեց լսավսար,
ԼԵՆԻՆՈ, ԼԵՆԻՆՈ.
ԼԵՆԻ ունի քար ը քասար,
ԼԵՆԻՆՈ, ՋԱՎԱՆԻՆՈ:

Ասել և Դժլաղ դյուզացի (Նոր-Բայազետի շրջան) Զարո Առա-
քելլանը, Տնված 1904 թ. բանվորուհի յե. լսել և ուրիշներից,

ԼԵՆԻՆԻ ԶԱՐԵՄԱՆ

Բատոլի վըրի զինին,
Բոյիդ մեռնիմ.
Կեցցե՛ մեր լնկեր լինին,
Յարն անուշ:

Բատոլի վըրի մանած,
Զանիդ մեռնիմ.
Խմենք լինինի լինաց,
Յարն անուշ:

Թիլվեա բերին գանակ,
Հողուդ մեռնիմ.
Կեցցե՛ մեր կարմիր բանակ,
Յարն անուշ:

Կլոր արտը գարի յա,
Բոյիդ մեռնիմ.
Կոմսոմոլի տարի յա,
Յարն անուշ:

Զերիցս հանի նազան,
Բոյիդ մեռնիմ.
Փչաներ դաշնակցական,
Յարն անուշ:

Կլոր արտը կորեկ ա,
Զանիդ մեռնիմ.
Կոմունիստի որենք ա,
Յարն անուշ:

Ասել և Ապարանցն ազգի կուլու յերգչուհի Զերեղ Դավթյանը,
ծնված 1916 թ.:

Ա Ե Ն Ի Ն Ի Խ Ա Դ Ա

Լենինի սալբոն եկավ,
Քառըրշապումն ուրախացավ,
Համգահարուստ նստավ լացավ,
Մեր Լենինի ջանին մտտաղ,
Ուր դարձ-դիվանին մատաղ:

Բատրակները վերցրին կեզը,
Հարսւստ կըլխիտ թափավ խողը,
Կացիր խասար խորըտ կողը.
Մեր Լենինի հոքուն մտտաղ,
Ուրա ինգերքերին մատաղ:

Մավզերիստներ ելան թաղի,
Կեզից ճըզին, զե՛ հա վաղի.
Զաթի վազել ձեղ կը սաղի.
Մեր Լենինի ջանին մատաղ,
Ուր դեվիթ-դաշմին մատաղ:

Ասկէ Ե.-Բայազետցի Զրկիլ Առաքելյանը, ծնված 1996 թ.:

ԼԵՆԻՆԻ ԶԱՆԻՄԱՆԸ

(Ժող. պարհեր)

Դերետի ձորի տակը,
Ախչի արի մեր բակը:
Մեզի վրկեց, մեզ աղատեց,—
Լենինը, Լենինը,
Դուռ, ջավահիւ, յաղութ, մտոջան ողինը, ուր դինը:

Յարս թամբին ամացել,
Աչքս ճամփին ամացել.
Բուրջուայից մեզ աղատեց,—
Լենինը, Լենինը,
Բերեց նորը, քշեց խավարը, հինն ու հինը:

Յար ջան, արելիս մատաղ,
Կանաչ տերեվիս մատաղ,
Նիկոլիցը մեզ աղատեց,—
Լենինը, Լենինը,
Դուռ, ջավահիւ, յաղութ, զմբութ ողինը, ուր դինը:

Ապրելի սինձն ի՞նչ ա,
Կաթնովի սղինձն ի՞նչ ա.
Դառդ ու զամից մեղ ազատեց,—
Լենինը, Լենինը.
Մեղ ազատեց, մենք ել գիտենք ուր գինը, ուր գինը:

Յես սիրել եմ, յես կ'առնեմ,
Խոսք ու զբիցն ի՞նչ ա.
Դառդ ու ցավից մեղ ազատեց,—
Լենինը, Լենինը.
Բանվոր, գեղացին լալ գիտե ուր գինը, ուր գինը:

Ախչի ջան, ճուր ես, մուր ես,
Յես ծարավ եմ, տու ճուր ես.
Մեղ ազատեց, մեղի փրկեց,—
Լենինը, Լենինը.
Մեղ ազատեց, մենք ել գիտենք ուր գինը, ուր գինը:

Համփարցման իրիկունը,
Յես եկել եմ, տու ժւր ես.
Ցավից, գառդից մեղ ազատեց,
Լենինը, Լենինը.
Ցավից փրկեց, կեցցե՛ ուրան անունը, անունը:

Մանեսից լալ եմ պերել,
Խաս գեյրա, շալ եմ պերել.
Մեղի փրկեց, մեղ ազատեց,
Լենինը, Լենինը.
Մեղի փրկեց, կեցցե՛ ուրան անունը, անունը:

Ասել ե Լոռեցի Սարդիս ձլոյանը, Ճնշած 1890 թ., լսել ե
աւրիշներից:

ԼԵՆԻՆՈՒԿ ԽԱՂ

Խեղճ ու նաչար շտու լաց արին,
Նիկոլ¹ ընպավ, աշկ սպաց արին+
Ետ վճն արեց, ետ վճն արեց,—
Ետիկ զըմմեն Լենին արեց:

Պետրովլա² հկավ լուռը,
Եարթին դիվանխանի գուռը,
Ետ վճն արեց, ետ վճն արեց,—
Ետիկ զըմմեն Լենին արեց:

Ֆաղիրներաց ծաթի արեվ,
Զանգինքերաց որըն ի սեվ,
Ետ վճն արեց, ետ վճն արեց,—
Ետիկ զըմմեն Լենին արեց:

¹ Նիկոլայ Ա ցարը

² Պետրովլա - Պետերբուրգ - Պետրովկա - Լենինգրադ

Գունեց սարը պոնեց դոշուն,
Խմբապետքեր տառցեր ին շուն.
Ետ վ՞ն արեց, ետ վ՞ն արեց,—
Ետիկ զըմմեն լենին արեց:

Ուղուն թալեց իրեք դեխից,
Խմբապետքեր փախան կեղից.
Ետ վ՞ն արեց, ետ վ՞ն արեց,—
Ետիկ զըմմեն լենին արեց:

Յեղարթա սարը դուման եր,
Բաղեղիք կրակի նման եր.
Ետ վ՞ն արեց, ետ վ՞ն արեց,—
Ետիկ պուլոր լենին արեց:

Յաղեգիք եկավ դդակապող,
Խմբապետներին պըսներ ի մող.
Ետ վ՞ն արեց, ետ վ՞ն արեց,—
Ետիկ զըմմեն լենին արեց:

Խընգոն¹ ասեց.—Մեր պան ի զուր,
Թողեք փախենք զըխ Զանդազուր.
Ետ վ՞ն արեց, ետ վ՞ն արեց,—
Ետիկ զըմմեն լենին արեց:

Աստուշ² ասեց.—Զիմ թալած մար
Իմալ թորկեմ, փախնիմ իմալ...

¹ Մառուղերիստ դաշնակ խմբապետ:

² Փառնեցի մառուղերիստ խմբապետ:

Ետ վ՞ն արեց, ետ վ՞ն արեց,
Ետի ոլուլոր կենին արեց.

Ասել և 69 աաըեկան անդրագետ պյուղացի Պետրոս Շիբոյանը
(Քնիկ Բաշ-Կալայի շըջանից), Շատ է յերդվում կոտայքի շըջա-
նում. Հորինողն անհայտ է:

* * *

Լենին ասավ.—Կըտամ ձե խաց
Բնցած որեր անդարց գնաց.
Տաշնակ մնաց բերանը բաց,
Յես Լենինու բախտին մեռնիմ:

Լենին զրկեց իրա զորքը,
Կտրեցին դաշնակի քնքը.
Յավից ազատվեց աշխարքը,
Յես Լենինու բախտին մեռնիմ:

Լենին եկալ մե թաքավոր,
Քասիր դառցավ բախտավոր:
Խմբաղետներ կանչին հավար.
Յես Լենինու բախտին մեռնիմ:

Լենին բերավ բալշեվիկը,
Մեկ ել տեսանք տաշնակ չկա.
Ինչ լավ ա վոր տաշնակ չկա.
Յես Լենինու բախտին մեռնիմ:

Ահնինը մե տվալ կոլխազ,
Տաշնակներ քանց շահմար ոյ,
Քշեց խրկեց սատանի ծոց.
Յես Ահնինու բախտին մհանիւ:

Ասել և Նոր-Բայագեացի, Նոյիմ Սէմանյանը, ծգած 2915թ.,
բանվորուհի Դուերում:

* * *

Մենք ունինք մեկ լով Լենին,

Մեռնիմ Լենինու դինին.

Դին ը գիրագ անխախտ ի,

Մեռնիմ Լենինու բախտին:

Բախտ ու խղբալը շատ ի,

Մեր Լենինը մեկ խատ ի.

Մեկ խատ պայծառ ճրաք ի,

Թռ դռշմանը արաքի:

Տբաքի, վով չե ուզի,

Մեր Լենինը մեկ լուս ի.

Լուսավորեց աշխարքը,

Կեցցե Լենինի փառքը:

Փառք ը պատիվ շատ ըլնի,

Մեր Լենինը մեկ խատ ըլնի.

Մեկ խատ խաղարի մեջին,

Կուլակն աղարի մեջին:

Ազար-բեղար կուլակին,

Մեռնիմ Լենինու կտակին:

Ասել ե նոյն Նոյիմ Սիմոնյանը:

* * *

Յրեկ բատրակ եյի,
Եսոր—դատավոր,
Լենինի խոսքերով,
Դարձա բախտավոր.
Խոսքերիտ մատաղ, Լենին ջան, խոսքերիտ.
Գործերիտ մատաղ, Լենին ջան, գործերիտ:

Հարուստը կապել եր
Մեր ճար ու ճամփեն,
Հող ու գավոդ իւկել՝
Զաֆթել եր ամեն.
Զորքերիտ մատաղ, Լենին ջան, զորքերիտ.
Գործերիտ մատաղ, Լենին ջան, գործերիտ:

Աշխարհը մէ ծով եր,
Մենք մեչը ծարավ.
Լենինի գործերով,
Տևաք՝ ինչ տառավ:
Գործերիտ մատաղ, Լենին ջան, գործերիտ.
Փորցերիտ մատաղ, Լենին ջան, փորցերիտ:

Աղքատ, չքավորը
Որտերեվ տեսավ,
Հարուստը խեղճացավ,
Որը սեվ տեսավ:
Պատվերիտ մատաղ, Լենին ջան, պատվերիտ-
Պատկերիտ մատաղ, Լենին ջան, պատկերիտ:

Զավահիր անունս
Ապրի հալիսյան,
Գործ, աշխատանքս
Միշտ անխափան:
Գործերիտ մատաղ, Լենին ջան, գործերիտ,
Խոսքերիտ մատաղ, Լենին ջան, խոսքերիտ:

Ասել և Դուլալեցի Սերոբ Նաղշքարյանը, ծնված 1909թ.
լսել և համարյակացի աղջիկներից:

* * *

Աենի շափաղ քանց արեվ,
Մեր կենուն շատ, շատ պարեվ.
Հեյշան, կենուն շատ պարեվ,
Կարմիր կենուն որ-արեվ:

Լենու սալբդ վոր առանք,
Յոխառւլի սիրտ պայծառավ.
Պանակ մեր երկիրն առավ.
Կանչին՝ մեր կենի հուսամ:

Լենի յոխառւլի տերն ի,
Անուշ կենի մեր խերն ի.
Մեր իզբաւ ենու ծեսն ի,
Վոն քեշ իրեշկա, մեսնի:

Լենի հոքմեց զկարմիր որդու,
Եսաց, — Զարկ, ես հաշխար շուռ տու.
Բնի ի, եսաց, մեր տանջեցին,
Որ, ապրուստից զբկեցին:

Աենի խեծավ ուրան դռաթ,
Սաղ հաշխար ենու մնաց մաթ.
Նիկոլի, բուրջըլի մեչը,
Եցկեց զուլում ը դիամաթ:

Աենի մեկ քաջ իգիթ ի,
Պանսակ ենու ոքսական ոլիտի.
Բուրջըլի որդուն ջալթեց,
Մէ ենորից ազատեց:

Աենի խին հաշխար շուռ իպի,
Մեղի ոլորի լուս իպի.
Մէր Աենու բաժին զուրբան,
Բուրջըլին մըրմուռ իպի:

Ուսստամի-Զալ¹ Աենի,
Բականդար-զուլպար² Աենի.
Հաշխարի փրկիչ Աենի,
Մեղի աղատիչ Աենի:

Ասել ե բնիկ Դամիշլու դյուզի բնակչունի նազո Բաղեցյան-
նը, ծնված 1899 թ.։ Ներկայումս ապրում ե Վաղարշապատում։

1 «Շահ-Նամիշ»-ի հերոս, իրանի փահլեզոն Զալի փորդի
Անստամի։

2 Աղեքսանդր Մակեդոնացին—զարձել ե արհելյան ժողո-
վուրդների վիպական հերոսը։

Գհնանք սորի քամակը,
Կեցցէ կաբմիր պահակը.

Մեր Լենինը, մեր Լենինը մի հատ ա, մի հատ ա,
Մեր դառդերը, մեր ցավերը փարատա, փարատա:

Ճուրն առա յելա դուզը,
Կեցցէ կաբմիր կոլխոզը.

Բատալինը, Բատալինը պողպատ ա, պողպատ ա,
Խեկավար ա, միշտ հախտող ա, տնպարտ ա,

անպարտ ա:

Հախովից պերի խիճը,
Կեցցէ մեր քաջ պճիճը.

Կալինինը, Կալինինը հառաչ ա, հառաչ ա,
Մեր թշնամին, մեր թշնամին թող հաչա, թող հաչա:

Ել ինչ կանենք հավատը,
Կեցցէ կարմիր սավետը.

Վարաշիլով, Վարաշիլով շատ քաջ ա, շատ քաջ ա,
Զար թշնամուն չխտա ճամփա ու մաջալ, ու մաջալ:

Կոխս կապի շալը,
Կորչի թող կապիտալ.

Մեր Լենինը, մեր Լենինը մի հատ ա, մի հատ ա,
Մեր ցավերը, մեր դառդերը փարատա, փարատա:

Առել և Դիլիջանցի Սըբուհի Վարդանյանը, լսել և 1931 թ.
Շամշադինցի Գեղորգից(?). յերգի հորինողն անհայտ է:

ԼԵՆԻՆԻ ՅԵՐԳԸ

Լսէք պատմեմ իրականից,
Թե իսկը ով եր Լենինը.
Հասկացող եր ամմեն բանից,
Շնորքի ծով եր Լենինը:

Ծով խելքովը աշխարհ չափեց,
Ինչքան ձիկ ու ջանքեր թափեց,
Թշնամին տեսավ սարսափեց,
Ընդերներով եր Լենինը:

Ընդերներով շատ-շատ տարի,
Աշխատեցին ժիր ու արի.
Մեծ հոքի յեր, խղճով բարի,
Շատ անունով եր Լենինը:

Անունը պայծառ ու մեծ եր,
Լուս տվող կրակ ու բոց եր.
Բարի, մարթասեր, անկեղծ եր,
Եհտիբարով եր Լենինը:

Եհաիրարով քաջ խելավար,
Գտավ բանվորին գեղ ու ճար.
Շատ հոքսեր քաշեց անհամար,
Ինթիղարով եր կենինը:

Ինթիղարը առավ դործով,
Խմաստուն, խելացի, փորցով.
Սաղ թշնամիքը թափեց ծով,
Զարբ ը զոռով եր կենինը:

— Զառբըտ զոռ, բանվնը, գեղացի,
Ասավ, թեղ արա միացի.
Բոլոր աշխարհը տիրացի.—
Այսպես խոսող եր կենինը:

Խոսող եր, խոսքերը անդին,
Շուռ տվեց աշխարհը իր հանդին.
Շինելով նորը, քանդեց հին,
Հինը կործանող եր կենինը:

Կործանեց ուժեղը, չարը,
Վեր քարին չթողեց քարը.
Կտրվեց բուրջույի ճարը,
Խիստ հետեւող եր կենինը:

Հետեւեց, յերկիրը շինեց,
Անապատները ջուր անցուց.
Ծովը ծովի հետ միացուց,
Քաջ աշխատող եր կենինը:

Աշխատողին պառձանք լինի,
Հետեւլողներին կյանք լինի,
Նադուք, խոսքերը թանգ լինի,
Արժանավոր եր լենինը:

Ասել ե կույր աշուղ Քյամալ Բեկարտանը, ծնված 1901 թ.,
Հենինականի շրջանից. աշուղական անունը Նազուք եւ

ԼԵՆԻՆԻ ՑԵՐ ԳԼ

(Նրա մահվան առթիվ)

Լենինը մի լուս եր, եկավ ու անցավ,
Իրա խոսք ու կոռծը աշխարքը լցվավ.
Քանց լուսավոր աստղ փայլեց ու անցավ,
Ավանս քեզի, ավանս, աննման Լենին:

Արեվելք, արեվմուտք, հարավ ու հուսիս,
Ամեն տեղ տարածվեց քո վառ փառքի լիս-
Տհր յես մեծ մարգարե, փրկող ամենքիս,
Ավանս, հաղար ավսոս, աննման Լենին:

Տու ամբողջ յերկրի փոխեցիր կարքը,
Շուռ տվիր կլիխիլեր, սահմանիր վարքը.
Աշխարե աշխար հասավ քո անվան փառքը,
Ավանս, վոր մահացար, մեր ընկեր Լենին:

Թշնամի աղքերը ընկեր շինեցիր,
Զրկված պանվորներին առաջ քաշեցիր.
Խեղճ, ֆաղիր գեղացու հոքին փրկեցիր,
Հաղար ավսոս մեռար, դու մեր լավ Լենին:

Ասել ե խոյեցի Լեզոն Լեվոնանը, ծնված 1898 թ. : գրեառ-
նելու ժամանակ բանվոր եր Արթրկում: Լսել ե ուրիշներից:

ԼԵՆԻՆԻ ՅԵՐԳԸ

Ուժեղն աշխարհը տիրել եր,
Զրկել քանդել, ավերել եր.
Զոռը անզորին կերել եր,
Վար մեկը ասեմ, լենին:

Շուրա դըր սանըն քանըն,
Դուդ դըր դարա-դիվանն.
Խնչալլահ գորդըխ սանըն,
Մե մին թարազըն, լենին:

Քանի կար աղքատ, հարուստ,
Զեյինք գտնի հաց ու հաքուստ.
Գեղացին չուներ ապրուստ,
Զեռը շատ պակաս եր, լենին:

Վարդարարասն հար նովրադա,
Հալխտրդըն խան, բեյ վա աղա.
Իթ զանդինի զուլյամաղա,
Դույի գարին դագդըն լենին:

Յավեր ենք քաշել անհամար,
Հաշիւլ արա, թվի, ջամ ար.
Արթարության կոռծի համար,
Ո՞վ ինչ պետք ա ասի, ևնին:

Քեչտի դոլա, յազմուը յաղա,
Շաք գոշնամիշ դնւլի բաղա,
Ֆոթունադան դուռթուլմաղա,
Շուրա ֆարման յազըն, ևնին:

Գալդ բարի, հազար բարի,
Մնա, ապրիր, շատ-շատ տարի,
Մենք քեզ հետ ենք, ուժո լարի,
Նպաստակիդ հասիր, ևնին:

Գորմիտսան դուսայիշամ,
Սանա մայիլ ջումլի ալամ.
Ո՛ գուն ոսլա դալըն թամամ,
Բիթորն հար մուրազըն, ևնին:

Ասել ե բնիկ Հին-Նախիջեղանցի, Արթիկի բանվոր Զումշուղ
Գեղորգյանը, ծնված 1895 թ.:

ԼԵՆԻՆԻ ՅԵՐԱԿԱՆ

Լենինի արարքը աշխարք պատեց,
Շատին խսակացուց, հոգի ջան, շատին խրատեց:

Ճշմարիտ խոսքով, հարազատ մտքով,
Իր ծովլ խելքով, հոքի ջան, մեղի ազատեց:

Նիկոլին քցեց, ուր հերն անիծեց,
Բուրժույին լծեց, հոքի ջան, սեղմեց, խրատեց:

Աշխարե աշխար, ծովի ծով անցավ,
Վորքան տանջվեցավ, հոքի ջան, մինչ մեղ ազատեց:

Սութ կրոնը թույն, ասկի խտրություն,
Ուժ ու պոնութուն, հոքի ջան, բոլոր վերացրեց:

Մեր փրկէչ Լենին, ազատիչ Լենին,
Ամեն ինչ Լենին, հոքի ջան, մեղ համար պերեց:

Ազքատի հերը, բանվորի տերը,
Գեղացու սերը, հոքի ջան, առավ վաստակեց:

Մեր ազիզ լենին, դու մեր մեծ լենին,
Ինչ ասեց լենին, հոքի ջան, պոլոր կատարվեց:
Ընկեր լենինը, ընտիր լենինը,
Մեր տեր լենինը, հոքի ջան, ի՞նչի պակասեց:
Քանի վոր կանք սաղ, անըմիտ մատաղ,
Բատրակ ու հոտաղ, հոքի ջան, ցավերս փարատեց:

Ասել ե նույն Զումշուղ Գեվորդյանը,

ԼԵՆԻՆԻ ԳԱՍՏԱՆԻ

Հսկը ծեղի պատմեմ, ինգերներ,
Թե ինչեր արեց Լենինը.
Հենց վոր Նիկոլն ընկավ թախտեն,
Սահմանն ընցավ Լենինը:

Հենց վոր տեմն ելավ Կերըսկին¹,
Իրեսին եկավ պուըսկին.
Փախան ալբալ, պոչերը կզիին,
Ու առաջացավ Լենինը:

Քաջ Լենինը քաշեց թուրը,
Ընցավ Թոնա² կետի ճուրը.
Կերըսկիյին եկավ լուրը,
Ասին.—Փախի՛, եկավ Լենինը:

Լենինն եր քամըրի թաքավոր,
Քաշեց ուր զորքը սաղ-պոլոր.
Հարուստ, զանգին մնացին մոլոր,
Թամմըզին քշեց Լենինը:

1 Կերենսկի:

2 Թոն:

Պահպորներ լենինի քսմագը,
Հուշաղարրն ել ընցավ քամակը.
Խանդավ բուրջույի ջրաքը,
Խոզին խավսար արեց լենինը:

Լենինը խաքավ գենքը, դրախը,
Հարուստների սիրտն ինդավ ախը.
Նոր ըսկեց փախըփախը՝
Յեփ ձառթը քցեց լենինը:

Զորքը քաշեց մտավ Պետրպոլ¹
Սըրփեց, չխարցուց սաղըսոլը.
Տաղ ել բուրջույին կոտորեց բոլ
Սավետը տրեց լենինը:

Մոսկովը վերցրեց, վլաստը դրին,
Հմմեն տեղ հեղկոմ ընդրին.
Բալշեվիյներն աշխար դիրին,
Թաքավորի թախտը նստավ լենինը:

Յեփ լենինը նստավ թախտը,
Բացեց քասիր-քուսուրի բախտը.
Ամմա պայս ֆուանդ, Ինդիլիզներ ետ վախտը,
Ղոշում քաշին եկան թեխ լենինը:

Տանց պերաններն ել տվեց թեխ չու,
Ճառթեց ու կոտորեց բոլ-բոլ.
Քշեց թամմը թեխ Ըստամբոլ,
Յերկիրը մաքրեց լենինը:

1 Պետրպոլ—Պետրոգրադ - լենինդրադ :

Աթարբագովն¹ եր կարմիր կլող,
Միյասնիկովը²—համակրող.
Հստալինը՝ քաջ եր, կռվող,—
Ինզերներ ուներ Լենինը:

Շահումյանն ու Նարիմանով,
Զափարիձով³, Թուլիմիտով⁴.
Սաղ քսանվեց ինգերներով,—
Կուրսեց ու շատ ցավեց Լենինը:
Լենինը մեռավ, կեսցե կործը,
Հստալինը շարունակեց դար կործը.
Ետենց սոսալիզմի խարցը,
Տանես են, ինչ թար ասեց Լենինը:

1 Աթարբեյյան

2 Մյասնիկյան

3 Զափարիձե

4 Թուլիտով

Պերեց մեղի ազադըթուն,
Կոլխոզ, սովխոզ, ըմմեն բաթուն.
Խախանդըթուն, առասըթուն,
Տանք թամմը պերեց լենինը:

Ա. ըշակն ասեց ետ խոսկերը,
Կեսցեն լենինի կործերը.
Ապրի հստալինն ու իրա ինգերները,
Իմացեք վոր չի մեռե լենինը:

Ասել և Սալմաստի շրջանի գոռողացի Արշակ Ստեփանյանը՝
Ճնշած 1869 թ., ներկայումս ապրում և Եջմիածնի շրջանում:

ԼԵՆԻՆԻ ՑԵՐԳԸ

Կեցցե լենինի ջանքը,
Իզուր չանցավ աշխատանքը,
Փրկեց բանվորի կյանքը.
Հիշենք լենինը, լենինը:

Բոլոր աշխարհ ծրագրեց,
Բանվորներին միացրեց,
Տեքստիլ գործարան հիմնեց.
Հիշենք լենինը, լենինը:

Շիրկանալի նվաճումը,
Քանդեց բուրժը վայի տունը,
Կտը աչքերիցը քունը.
Հիշենք լենինը, լենինը:

Չոր տեղերը կանանչեցրեց,
Յելլոպային ամանչեցրեց,
Տուն ու տեղներս լցրեց.
Հիշենք լենինը, լենինը:

Ամենայն տեսակ գործարան,
Հիմնեց վոխչ յերկրում համայն,
Բանվորին չժողեց անբան.
Հիշենք լենինը, լենինը:

Շիրկանալը խըլդին փրկեց,
Ամենայն գեղեր ջուր խրկեց,
Զարկամ բուրժովային մրկեց.
Հիշենք լենինը, լենինը:

Բոլոր գեղեր դպրոցներ հիմնեց,
Մատաղ սեղունդ մեջը լցրեց,
Տաստիարակեց, դուրս ավեց.
Հիշենք լենինը, լենինը:

Կուսակցություն մեղ պահապան,
Ժողովուրթը կուշտ ու սաղ ջան,
Կեցցեն մեծեր, քանի վոր կան.
Հիշենք լենինը, լենինը:

Կոլխոզն և մեղ պահողը,
Համաննական ջուրը, հողը,
Եւ չկա մեղ կողոպտողը.
Հիշենք լենինը, լենինը:

Մատաղ սերունդներ, միացեք,
Լենինի լողունդը վերցրեք,
Պողոսի խոռոքերն խմացեք,
Հիշենք լենինը, լենինը:

Ասել ե Շիշափեցի (Ամասիայի շրջան) Պողոս Սահակյանը
(մականունը Պուլիկ), ծնված 1880 թ.: Նա գլուխ բաղմաթիվ հե-
քիւթներ. հորինում ե յերդեր. հայտնի րե շրջանում վորպես սրա-
միւտ և առակախոս մարդ:

ԼԵՆԻՆԻ ՅԵՐԳԸ

Լսեցինք լենինի անունը,—
Շինեց քառիբ-քուսուբի տունը.
Կտրվեց բուրժըվանի քունը.
Անունիտ մատաղ, լենին ջան:

Մուկովից ծաքեց մեկ արեվ,
Սաղ աշխարին տվեց պարեվ,
Կուլակի որը տառալ սեվ.
Քո գալըտ պարի, լենին ջան:

Յեփ կավկաս խասավ քո լուրը,
Տաշնակը թափավ սեվ ջուրը,
Փախեք, ել ձեր պանը զուր ի.
Գալըտ բարի, ջան, լենին ջան:

Որդուն Եկամվ Դիլիջանից,
Մավզերիստներ ճղին Հայաստանից.
Պոծանք տաշնակի նման գել-գաղանից,
Մնացինք ելման, լենին ջան:

Տաշնակը փախավ Զանգաղուր,
Կ'ասեն Նժդեն շատ ի տիսուր,
Ժողվեց ուր զորք, փախավ դըխ Արազի ջուր,
Յեփ կարմիրքեր խասան, Լենին ջան:

Վայ ձե գնալ ըլնի, գալ չըլնի,
Թոռ ձե մե խոշ իղբալ չըլնի.
Տաշնակ փախավ ել գալ չըլնի,
Հայաստան փրկիր, Լենին ջան:

Տաշնակքեր փախան դըխ Թարվին,
Խմբապետաց կոտովավ վիզ.
Յերկրից կտրվավ ենոնց թողն ու իզ,
Ջումաթ մնաց քո, Լենին ջան:

Ասել ե բնիկ Ականցի Անդալաթ Պետրոսյանը, այրի կինե,
Մայիս 1900 թ. Ներկայումս ապրում ե Եջմիածնում, լսել ե
ուրիշներից:

Արեվելք, արեվմուտք, հյուսիս և հարավ
Դատեցին, բանեցին, հարուստը տարավ.
Վայ լըմըն տարավ,
Ա՛խ յաման տարավ:

Հող ը ջուր, մալ ը մուլք, հարուստը տիրեց,
Վոսկին ու արծաթն իր տակը տրեց.
Վայ լըմըն տրեց,
Ա՛խ յաման տրեց:

Հարուստը կաշառում ուժեղ, գատավոր,
Ուր ինքն ե գող, աղքատն ե մեղավոր.
Վայ լըմըն մեղավոր,
Ա՛խ յաման մեղավոր:

Սելի պես կը հոսեր, արուն ու թանաք,
Աշխարն եր մ՛ի դմակը հարուստը՝ դանակ.
Վայ լըմըն դանակ
Ա՛խ յաման դանակ:

Անցան շատ տարիներ, անցավ ժամանակ,
Լենինի ձայնն եկավ ախքատի քոմագ.

Զենն եկավ Լենինի, ուր ձենին դուրսան,
Ռւրախացավ աղքատ, տիրեց դռչքան:

Լենինի անունով որդու կապեցին,
Բուրժուվայի գլխին կրակ թափեցին:

Դենիկին, Վրանգել, Թրանգ, Ինգլիզը,
